ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 1

«Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի օգոստոսի 26-ի «Աշխատանքային խումբ ստեղծելու, դրա կազմը և գործունեության ու գործառույթների իրականացման կարգը հաստատելու մասին» N 1197-Ա որոշման համաձայն 09.02.2022 թվականին կայացած Աշխատանքային խմբի հերթական նիստի վերաբերյալ.

Նիստի ժամանակ համաձայն նախապես մշակված օրակարգի՝ քննարկվել են հետևյալ հարցերը.

1) **«ՀՀ ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքի նախագծի որդեգրման ընթացակարգերի բարեփոխմանն ուղղված դրույթների վերաբերյալ,**
2) **Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման նոր էլեկտրոնային շտեմարանի պրոտոտիպային տարբերակի ներկայացում**

Նիստին մասնակցում էին 8 անդամ և հրավիրված անձինք՝ ՔԿԱԳ գործակալության պետ Ա. Խալաթյանը, Երևանի քաղաքապետարանի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետ Լ. Հովհաննիսյանը, ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի փորձագետ Դ. Թումասյանը, ԱՄՆ ՄԶԳ «Տվյալներ ազդեցության համար» ծրագրի փորձագետ Հ. Ղուկասյանը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային կառավարման վարչության տարածքային զարգացման պլանավորման բաժնի պետ Ա. Իվանյանը:

Նիստի արդյունքում կայացվեցին համապատասխան որոշումներ, որի մասին՝ տեղեկատվության գաղտնիությունից ելնելով, մանրամասն տվյալներ չի հրապարակվում: